ԳԵՎՈՐԳ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ՍԵՌԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱՆԽՈՒՄԸ

Սեռական հանցագործությունների դեմ տարվող պայքարում կարևոր նշանակություն ունի այն անձանց հայտնաբերումը, որոնցից /գնահատելով վարքի հակահասարակական ուղղվածությունը/ կարելի է սպասել սեռական հանցագործության կատարում, նրանց և նրանց անմի-ջական շրջապատի նկատմամբ համապատասխան ներգործությունը, որն ուղղված է հիշատակված տեսակի հանցանքների կանխմանը: Ուստի կարևոր ենք համարում առանձնահատուկ ուշադրությամբ անդրադառնալ սեռական հանցագործությունների անհատական կանխման հիմնախնդրին:

Ինչպես նշում է Ն.Ա.Օզովան, անհատական կանխումը միջոցների համալիր է՝ ուղղված այն անձանց կողմից հանցագործության կատարման պատճառների ու պայմանների վերացմանը, ովքեր պարբերաբար խախտում են հասարակական կարգը, չարաշահում ալկոհոլը, օգտագործում թմրամիջոցներ, վարում են անառակաբարո կենսակերպ և անխտրաբարո են սեռական կապերում, ինչպես նաև այն անձանց նկատմամբ, ովքեր նախկինում դատապարտվել են հանցագործության համար և վերադարձել են պատիժը կրելուց, կամ գտնվում են ազատազրկման վայրերում, կամ ունեն հոգեկան շեղումներ, և նրանց շրջանում այնպիսիների հայտնաբերմանը, ովքեր կարող են կատարել սեռական հանցագործություններ[1]:

Անհատական կանխումը հանցագործությունների ընդհանուր սոցիալական և հատուկ քրեաբանական կանխարգելման հնարավորությունների օգտագործման ձևերից է՝ ուղղված անձի նկատմամբ ներգործությանը: Չնայած դրան, անհատական կանխումն ինքնուրույն է, քանի որ այն հարմարեցված է անձի կյանքի առանձնահատուկ պայմաններն ու հոգեբանությունը, անձնային առանձնահատկությունները հաշվի առնելուն: Դա չի նշանակում, որ անհատական կանխարգելումը ներառում է միայն հանցանք կատարելու հակում ունեցող անձի նկատմամբ անմիջական ներգործությունը: Անհատական կանխիչ միջոցները կարող են ուղղվել նաև տվյալ անհատի շրջապատին[2]: Այդպիսով, որպես սեռական հանցագործությունների անհատական կանխման օբյեկտ պետք է դիտարկել այն կոնկրետ անձին, ում վարքագիծը թույլ է տալիս ենթադրել, որ նա կարող է կատարել նշված տեսակի հանցանք, ինչպես նաև այդ անձի վրա բացասաբար ներգործող միկրոմիջավայրը:

Կանխարգելիչ ներգործության այս տեսակի սուբյեկտներից են ընտանիքը, աշխատանքային և ուսումնական կոլեկտիվները, հասարակական միավորումները, պետական իրավապահ մարմինների աշխատակիցները և այլն[3]: Թվարկված սուբյեկտները հանցավոր ճանապարհին կանգնելու հավանական անձանց հետ տարվող անհատական կանխարգելիչ աշխատանքը կառուցում են երկու ինքնուրույն, սակայն միմյանց հետ սերտ կապված և փոխլրացնող խումբ միջոցառումներով.

ա/ միջոցառումներ, որոնք ուղղված են վերոհիշյալ անձանց նկատմամբ դաստիարակչական ներգործությանը՝ նրանց հակահասարակական հայացքները, սովորությունները և ձգտումները հաղթահարելու համար,

բ/ միջոցառումներ, որոնք ուղղված են վերոհիշյալ անձանց անհատական կյանքի ոլորտում առկա բացասաբար ազդող անբարենպաստ պայմանների վերացմանը[4]:

Նախ ներկայացնենք անձի նկատմամբ ներգործության միջոցառումները: Այստեղ խոսքն անձի վրա այնպիսի դրական ներգործության մասին է, որը կոչված է ապահովել նրա սոցիալական առողջացումը և նախականխել նրա կողմից հնարավոր իրավախախտումների կատարումը[5]: Այս խնդրի լուծումը պահանջում է նախ և առաջ հայտնաբերել այն անձանց, ովքեր հակված են կատարել սեռական հանցագործություն, ուսումնասիրել նրանց, որոշել նրանց կողմից հանցանք կատարելու հավանականությունը:

Սեռական հանցագործություններ կատարելու հակում ունեցող անձանց հայտնաբերելու համար իրավապահ մարմիններին կարող են հետաքրքրել սեռական, բռնի հանցագործությունների համար նախկինում դատապարտված, կենցաղում հակաբարոյական արարքներ թույլ տվող և հակահասարակական կենսակերպ վարող անձինք, հարբեցողները և թմրամոլները, պոռնկությամբ զբաղվելու համար որջեր կազմակերպողները, պահողները և կավատները, ՍԻԱՎ վարակակիրները, վեներական հիվանդություններ և սեռական հոդի վրա հոգեկան շեղումներ ունեցող անձինք[6]:

Հավանական օբյեկտի հայտնաբերմանը հաջորդում է նրա ուսումնասիրումը, որն անհատական հոգեբանական կառուցվածքի վերլուծության մեթոդների և հնարքների համակարգ է՝ ուղղված վարքի սոցիալական, քրեածին ձևերի կառավարման աստիճանի, այն սահմանափակող օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնների առկայության որոշմանը: Ուսումնասիրման հիմնական մեթոդներն են օբյեկտիվ դիտումը, կենսագրական մեթոդը /կյանքի պատմության ուսումնասիրումը/, անկախ բնութագրերի ընդհանրացումը[7]:

Տվյալ անձի կողմից հանցանք կատարելու հավանականությունը որոշվում է անհատական հանցավոր վարքի կանխատեսման միջոցով: Ըստ Ա.Յա.Զիրյանովի, անհատական կանխատեսումը հատուկ կազմակերպված գործունեություն է, որը նպատակ ունի ապագայում կոնկրետ անձի վարքի

հնարավոր տարբերակների կամ վիճակների մասին հիմնավորված դատողություններ ստանալ՝ մատնանշելով դրանցից առավել հավանականները: Անհատական հանցավոր վարքի կանխատեսումն անհատական կանխատեսման տարրերից է, բովան-դակությամբ ավելի նեղ է /տարածվում է բացառապես քրեաբանական բնույթի օբյեկտների վրա/, քան առաջինը և պետք է դիտարկվի որպես քրեաբանական կանխատեսման տեսակ[8]:

Կարևոր նշանակություն ունի օբյեկտի նկատմամբ անմիջական կանխիչ ներգործությունը: ՀՀ օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ անհատական կանխարգելման հիմնական ծանրությունը բաժին է ընկել ՀՀ ոստիկանությանը, հատկապես դրա պրոֆիլակտիկ ծառայությանը: Այսպես, տեղամասային տեսուչները հանցագործությունների և վարչական իրավախախտումների պրոֆիլակտիկա իրականացնելիս պարտավոր են անհատական պրոֆիլակտիկ աշխատանքներ իրականացնել և տեղամասի անձնագրում հաշվառել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված անձանց, որոնց վրա դատարանի կողմից դրված են որոշակի պարտականություններ, ազատազրկման հետ կապ չունեցող պատժի դատապարտված անձանց, քրոնիկ հարբեցողներին, թմրամոլներին, առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ և հոգեներգործուն նյութեր օգտագործող անձանց, ովքեր հաշվառված են առողջապահական հիմնարկներում եւ պարբերաբար թույլ են տալիս իրավախախտումներ, հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց, ովքեր ուղղակի վտանգ են ներկայացնում իրենց և շրջապատի համար ու հաշվառված են առողջապահական հիմնարկներում, անչափահասների գործերով ստորաբաժանումներում հաշվառված անչափահաս իրավախախտներին /թվարկված անձանց համար կազմվում են հսկողական քարտեր/, ազատազրկման վայրերից վերադարձած անձանց, ընտանեկան-կենցաղային հարաբերությունների ոլորտում պարբերաբար և շարունակական բնույթ կրող իրավախախտումներ թույլ տվող անձանց /այս անձանց վերաբերյալ կազմվում են պրոֆիլակտիկ գործեր/: Հսկողական քարտերում և պրոֆիլակտիկ գործերում կուտակվում են անձի վարքագծի, հանցավոր կապերի, մտադրությունների, կատարած իրավախախտումների մասին և օպերատիվ հետաքրքրություն ներկայացնող այլ անհրաժեշտ տեղեկություններ[9]:

Սեռական հանցագործությունների անհատական կանխման գործում մեծ նշանակություն ունեն անհատական ներգործության մեթոդները: Վերջինների թվին են դասվում խթանման, համոզման և հարկադրանքի մեթոդները: Խթանման մեթոդի բովանդակությունն է կազմում աշխատանքի տեղավորման, ուսման ընդունվելու, կենցաղային պայմանների բարելավման հարցերում օգնության ցուցաբերումը, ժամանցի կազմակերպմանն աջակցությունը և այլ միջոցները, որոնք մարդու վրա ներազդում են միջնորդավորված ձևով: Իսկ համոզման և հարկադրանքի մեթոդները անձի վրա անմիջական ներգործու-

թյան, ազդեցության գործիքներ են, որոնք նպատակ ունեն ապահովել նրա իրավաչափ վարքը[10]:

Համոզման մեթոդը որոշակի վարքի ճշտության և անհրաժեշտության կամ որևէ իրավա-խախտման անթույլատրելիության պարզաբանումն ու ապացուցումն է[11]: Համոզումը ներգործության գլխավոր մեթոդն է, որը ենթադրում է մի կողմից անձի նկատմամբ բազմակողմանի ազդեցություն՝ նպատակ ունենալով նրա մոտ ձևավորել դրական որակներ և չեզոքացնել բացասականները, մյուս կողմից նրան դրդել որոշակի գործունեության[12]:

Հարկադրանքը ոստիկանության գործունեության հիմնական մեթոդներից է: Այդ դրույթն ուղղակիորեն ամրագրված է «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում, որը ոստիկանությանն իրավունք է վերապահում հարկադրանք կիրառել օրենսդրությամբ իրեն վերապահված խնդիրներն իրականացնելիս /այդ թվում իրավախախտումները նախականխելիս, կանխելիս և խափանելիս/[13]: Մասնավորապես կարևորենք վարչական հարկադրանքի և հատկապես վարչական տույժի միջոցների կիրառումը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը վարչական տույժ նշանակելու նպատակներին է դասում իրավախախտում կատարած անձին դաստիարակելը, նրա, ինչպես նաև այլ անձանց կողմից նոր իրավախախտումների կատարումը կանխելը[14]: Ենթադրում ենք, որ խոսքը գնում է նաև հանցագործությունների կանխման մասին:

Անհատական կանխարգելիչ նշանակություն ունի նաև քաղաքացիաիրավական, կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառումը, քանի որ սահմանափակող բնույթ կրող նշված միջոցները բովանդակում են դաստիարակչական երանգ /որոշ իրավախախտողներին դրանք զսպում են անբարենպաստ հետևանքների վախով, իսկ մյուսներին կարգավորում են իրենց ամոթի, խղճահարության զգացման ուժով և այլն/[15]:

Մեր կարծիքով, թվարկված միջոցներից առավել արդյունավետ են համոզման և հարկադրանքի մեթոդները, իսկ խթանման մեթոդի իրականացումն արդի սոցիալ-տնտեսական պայմաններում մեծ մասամբ իրատեսական չէ:

Երկրորդ խումբ միջոցառումների նպատակն է վերացնել կամ չեզոքացնել սոցիալական միկրոմիջավայրի քրեածին գործոնները, որոնք բացասաբար են ազդում անձի և նրա վարքագծի վրա, ինչով էլ պայմանավորում են վարքային շեղումները: Նշված խնդրի լուծմամբ նախ հաղթահարվում են այսպես կոչված հակահրավական վարքի արտաքին պատճառները և ապա ստեղծվում են բարենպաստ պայմաններ, որոնց առկայությամբ անձի դաստիարակման, վերասոցիալականացման և շտկման միջոցները կարող են ունենալ դրական արդյունք: Այս միջոցառումների մեջ կարևոր տեղ պետք է հատկացնել այսպես կոչված անբարեկեցիկ ընտանիքների առողջացմանը, դրանց բացասական ազդեցության նախազգուշացմանը, հատկապես անչափահասների նկատմամբ, ինչպես նաև սոցիալական այն կապերի և հարաբերությունների նկատմամբ ներգործու-

թյանը, որոնց մեջ գտնվում է տվյալ անձը և որոնցով կապված է այլոց հետ: Այդ պատճառով անհատական կանխման սուբյեկտները պետք է մշակեն և իրականացնեն միջոցներ՝ ուղղված քրեածին դեր կատարող սոցիալական կապերի դրական փոփոխմանը և հակաքրեածին նշանակություն ունեցող կապերի ստեղծմանը[16]: Մասնավորապես, ընտանիքում սխալ հարաբերությունները կարող են վերացվել հարազատների հետ բացատրական զրույցներ անցկացնելով, իսկ անցանկալի ծանոթների բացասական ազդեցությունը կարող է բացառվել տվյալ անձին ուղղակիորեն առաջարկելով չշփվել նրանց հետ[17]:

Այսպիսով, սեռական հանցագործությունների անհատական կանխումն իրավապահ մարմինների /հատկապես ոստիկանության/ և հանցավորության կանխարգելման մյուս սուբյեկտների գործունեությունն է, որն ուղղված է վերոհիշյալ տեսակի ոտնձգություններ կատարելուն հակված կոնկրետ անձանց հակահասարակական վարքի շտկմանը և նրանց վրա շրջապատող միջավայրի՝ բացասական ազդեցություն ունեցող քրեածին գործոնների չեզոքացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Озова Н.А. Насильственные действия сексуального характера. – М.: 2006. էջ 173.
2. Дубовик О.Л. Принятие решения в механизме преступного поведения и индивидуальная профилактика преступлений.-М.: 1977. էջ 54
3. Мартыненко О.А. Детерминация и предупреждение преступности среди персонала органов внутренних дел Украины.-Х.: 2005.// www.allpravo.ru/library/doc6187p0/instrum6188/item6217.html 4. Лекарь А.Г. Профилактика преступлений. М.: 1972. էջ 95
5. Игошев К.Е. Социальный контроль и профилактика преступлений.Горький, 1976. էջ 67
6. *Масленников К.И. Оперативно-розыскные и криминологические проблемы предупреждения насильственных действий сексуального характера. Дисс. ... канд. юрид. наук. СПб.: 1999.* //www.kalinovsky-k.narod.ru/b/masl-g2.html
7. Самовичев Е.Г. Изучение личности профилактуемого: Энциклопедия юридической психологии /Под общ. ред. А.М.Столяренко. М.: 2003. էջ 109
8. Зырянов А.Я. Прогнозирование преступного поведения как разновидность индивидуального прогнозирования: Проблемы изучения личности правонарушителя: Сборник научных трудов.-М.:ВНИИ МВД СССР, 1984. էջ 50
9. «ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունում տեղամասային տեսուչների աշխատանքների կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1233-Ն որոշման /18.08.2006թ./ 18-29-րդ կետեր
10. Профилактика правонарушений. Составитель Р.В.Шагиева. Казань, 1989. էջ 26-27
11. Платонов Ю.П. Психологические феномены поведения персонала в группах и организациях. Т.1.- СПб.: 2001. էջ 314
12. Чуфаровский Ю.В. Психология оперативно-розыскной и следственной деятельности. -М.: 2003. էջ 115
13. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի /16.04.2001թ./ 2 հոդվածի 1-ին մաս
14. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի /06.12.1985թ./ 22 հոդված
15 . Озова Н.А. Насильственные действия сексуального характера. – М.: 2006. էջ 174
16. Саркисов Г.С. Индивидуальная профилактика преступлений.-Ер.: 1985. էջ 175-176
17. Лекарь А.Г. Профилактика преступлений. М.: 1972. էջ 99